պատասխանողը պետք է կրի իր կողմից ապացուցման ենթակա փաստը չապացուցելու բացասական հետևանքները:

Ընդհանրացնելով վերոգրյալը, Դատարանը գտնում է, որ «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու և վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով ներառելու մասին ՀՀ Ոստիկանության կայացրած որոշումը զուրկ է փաստական և իրավական հիմքերից, այն չի կարող համարվել պատճառաբանված որոշում, որպիսի պահանջը նախատեսված է «Գնումներ մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 46-րդ հոդվածներով, ուստի Դատարանը գտնում է, որ հայցվորի պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ:

6. Դատական ծախսերի բաշխում և կիրառված հայցի ապահովման միջոցների հարցի լուծում

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով հայցվորի կողմից պետական տուրքի գումարը նախապես վճարված լինելու հանգամանքը և այն, որ հայցը ենթակա է բավարարման, Դատարանը գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ինչ վերաբերում է սույն գործով կիրառված հայցի ապահովման միջոցների վերացման կամ պահպանման հարցին, ապա Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը:

Դատարանի 10.05.2023 թվականի որոշմամբ բավարարվել է հայցվորի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին: Հիմք ընդունելով սույն գործով հայցի ապահովման միջոցների առկայության փաստը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ2/2118/02/23 քաղաքացիական գործով 10.05.2023 թվականի Դատարանի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պետք է պահպանել մինչև սույն վճռի կատարումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 234.5-234.12-րդ, 302-րդ հոդվածների պահանջներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ոստիկանության պետի տեղակալ Վ. Մովսիսյանի 28.12.2022թ. որոշումն անվավեր [illegible] պահանջների մասին, բավարարել ամբողջությամբ.
2. Անվավեր ճանաչել «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանի 28.12.2022թ. [illegible]

3. ՀՀ ոստիկանությունից հօգուտ «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊ ընկերության բռնագանձել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊ ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:
4. Թիվ ԵԴ2/2118/02/23 քաղաքացիական գործով Դատարանի 10.05.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի կատարումը:
5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով պարտապանի հաշվին:
6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:
7. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **ՄԱՐԻՆԵ ՏԱՇՉՅԱՆ**